

Գնահատման մեխանիզմ

Մասնակիցների վերջնական գնահատականը արտահայտվելու է տոկոսներով (այսինքն առավելագույն միավորը 100%-ն է): Խնդրի սկզբում տրված է լինելու, թե ընդհանուր գնահատականի ո՞ր տոկոսն էք ստանալու խնդրի ամբողջական լուծման դեպքում: Խնդրի ոչ ամբողջական լուծման դեպքում Ձեր գնահատականը արտահայտված %-ներով հաշվարկվելու է հետևյալ բանաձևով.

$$\text{Գնահատական} = \frac{\text{տվյալ խնդրից վաստակած միավոր}}{\text{տվյալ խնդրի ընդհանուր միավոր}} \times \text{տվյալ խնդրի ներդրումը \% - ներով}$$

Օրինակ.

Մասնակիցը տվյալ խնդրից հավաքել է հետևյալ միավորները

Հարց	1	2	3	4	5	Ընդհանուր	%
Միավոր	5	2	1	2	1	11	25
Գնահատական	5	1	1	2	0	9	

$$\text{Գնահատական} = \frac{9}{11} \times 25 = 20.45 \%$$

Բոլոր խնդիրների վերջնական գնահատականները գումարվում են իրար: Մասնակցի վերջնական գնահատականը պետք է արտահայտված լինի հարյուրերորդական ճշտությամբ:

Հարգանքներով
Հանրապետական հանձնաժողով